


ԼՐԱՏՈՒ

ԹիՒ 6 - Օգոստոս 2024



70 տարի է ավելի՝ Սերունդներու Հայեցի Դաստիարակութիւն





Տնօրէնութեան Խօսքը



Դժուար է հաւատալ, թէ որքան արագ անցաւ 2023-2024 ուսումնական տարեշրջանը: Յետադարձ ակնարկ մը նետելով անցած ամիսներուն մէջ տեղի ունեցած ուսումնական եւ կրթական յառաջընթացներուն, ինչպէս նաեւ մշակութային յաջող ձեռնարկներուն, հպարտութեամբ կ'ուզեմ նշել, թէ մենք, որպէս կրթական եւ ուսումնական համայնք՝ իրաքանչիւր քայլափոխի մէջ զիրար ամբողջացուցած ենք՝ նորանոր նախաձեռնութիւններով, միաժամանակ կառուցելով ամուր կրթական կառոյց:

Որպէս ուսուցչակազմ եւ պաշտօնէութիւն, ջանք չխնայեցինք օգնելու մեր աշակերտներուն՝ հասնելու իրենց լաւագոյնին:

Կը վստահեցնենք, որ մեր ուսուցչակազմին եւ պաշտօնէութեան ժրաջան նուիրումովեամբ կը ցանոյի այն հունտը՝ որուն մեր ապագայ առաջնորդները պիտի հնձեն յարմար ժամանակին:

Այս տարի շատ ծրագիրներ յաջողապէս իրագործեցինք ու տակաւին պիտի շարունակենք նոյն թափով:

Հետեւաբար, իմ հիմնական նպատակս է լաւագոյն ձեւով գնահատել ուսուցչակազմը, եւ աշակերտներուն լուսաւոր ու բարձրորակ կրթութիւն հայթայթել: Իսկ գերագոյն նպատակս է՝ Վահան Թէքէեան վարժարանի ուսումնական մակարդակը հասցնել գերազանցութեան:

Մինչ յաջորդ ուսումնական տարի, բոլորիդ կը մաղթեմ սէր, երջանկութիւն և անսպառ ուսում:

*Լաւագոյն մաղթանքներով՝
Սեւանա Սեմերձեան Տարագձեան*

ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ԲԱՑՈՒՄ

Rotary Club of Beirut Cedars տրամադրեց 50 KW Արեւային Ելեկտրածին Ուժանիության Ջամակարգ Վահան Թէքէեան Միջնակարգ Վարժարանին



8 Փետրուար, 2024-ին “Rotary Club of Beirut Cedars” պաշտօնական բացումը կատարեց 50 KW արեւային ելեկտրածին ուժանիության համակարգի Պէյրուֆի Վահան Թէքէեան Միջնակարգ Վարժարանին մէջ: Այս միջոցառումը հիմքը դրաւ նոր ժամանակաշրջանի մը կայուն զարգացման եւ կրթական աջակցութեան:

Արարողութիւնը ընթացք առաւ օրուայ հանդիսավար նախկին Նախագահ Տիար

Ղասսան Հաժժարի խօսքով: Ան ընդգծեց “Rotary Club of Beirut Cedars”-ի կայուն սկզբունքները՝ մարմնատրուած “Four-Way Test”-ով: Պատուոյ հիւրեր, ներառեալ “Rotary Club of Beirut Cedars”-ի առաջնորդներ եւ համայնքի հաստատակամներ, ջերմօրէն ներկայացուցեցան՝ անտելով համագործակցային ոգի մը:

Ապա վարժարանի Հոգաբարձութեան ատենապետուհի՝ Տիկ. Անի Լաչինեան Մակարեան, ներկայացուց ուշագրաւ պատմական հեռանկարը ԹՄՄ-ի կատարած դերին՝ կրթութեան ոլորտէն ներս, 1947 թուականէն սկսեալ: Ան ողջունեց պաշտօնական արարողութեան բացումը ելեկտրածին ծրագրին: Ան անդրադարձաւ, որ այս նախաձեռնութիւնը ոչ թէ միայն կը բաւարարէ դպրոցի ելեկտրական պահանջները, այլ նաեւ՝ կը մեղմացնէ պիտօճեական ճնշումները, թոյլ տալով ընդլայնուած կրթական ծրագիրներու: Ան իր երախտագիտութիւնը յայտնեց թէ “Rotary Club of





Beirut Cedars” իր կապուածութեան՝ օժանդակելու մեր դպրոցին, յետ Պէյրութի պայթումին՝ մասնաւորաբար հովանաւորութեամբ նախկին նախագահ՝ Տիար Յակոբ Տանձիկեանի նախաձեռնութիւններուն, ինչպէս նաեւ նուիրատուներուն՝ Թէքէան Մշակութային Միութեան եւ դպրոցին հանդէպ իրենց տաճած վստահութեան համար:

Նախկին նախագահ՝ Տիար Յակոբ Տանձիկեան, իր հերթին ներկայացուց ծրագրին պատմողականը՝ գաղափարի յղացումէն մինչեւ աւարտը, արդիւնաբերական ոլորտին տեղեկութիւններ փոխանցեց եւ գնահատեց հիմնական ներդրող անհատները՝ շնորհակալութիւն յայտնելով “Rotary Club Los Angeles Cedars”-ին որ միշտ նեցուկ կը հանդիսանայ համայնքին: Ան շեշտեց “ Los Angeles Beirut Sister Cities ”-ի փափաքը, նեցուկ կանգնելու հայկական համայնքի պատկանող վարժարանի մը՝ անոր հայթայթելով ելեկտրածին համակարգ: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ “Narinc”-ի ընդհանուր մասնագէտ Տիար Նորայր Էլմայեանի: Բակելով իր խօսքը՝ անդրադարձաւ համակարգի ամուր կատարումը Յունուարէն սկսեալ, ընդգծելով իր արժէքը եղանակի յառաջդիմութեան հետ:

Ծրագրի մասնակից բարերարներ յաջորդաբար խօսք առին: Տիկին Անահիտ Տանձիկեան փոխանցեց, թէ ծրագիրը իր աջակցութիւնը ստացաւ նաեւ “Clara Margossian Trust” խնամակալութեան կողմէ, որ կը հանդիսանայ Վահան Թէքէան վարժարանի կարեւոր գործընկերներէն՝ կրթական համակարգի զարգացման եւ ենթակառուցուածքի նորոգութեան ծրագիրներուն, ինչպէս նաեւ համայնքի կարիքները բաւարարելու անոր աւելի լայնածաւալ առաքելութեանը՝ առողջապահութեան ոլորտին ի





մասնատրի դեղորայք հայթայթումի մէջ: Ան նշեց թէ՛ Տոքթ. Վարուժ Ալթըր պարմաքեան հոգաբարձութեան խնամակալն է թէ՛ սփիւռքի, թէ՛ ալ Հայաստանի համայնքներուն: Մինչ, Տիար Արա Գալֆայեան, որ կը ներկայացնէ “Los Angeles Beirut Sister Cities”-ին, լուսարձակի տակ առաւ իրենց կեդրոնացումը՝ ատեցնելու կրթական հնարաւորութիւնները եւ կամրջելու սովորելու փորձառութիւնները Լիբանանի եւ Ամերիկայի պահանջարկին վրայ:

Նախագահ Տիար Ռամգի Ապու Սամահը համապարփակ ներկայացուց տեղական համայնքներուն մէջ “Rotary Club of Beirut Cedars”-ին կատարած նշանակալի ներդրումներու մասին, մինչդեռ շրջանի Փոխ կառավարիչ Տիար Շաուքաթ Հուլան իր խօսքով անդրադարձաւ “Rotary Club of Beirut Cedars”-ին աջակցութեան ու կայուն զարգացման նախագծերուն՝ արձագանքելով շրջանի Կառավարիչ Տիար Պաշար Հատտատի երաշխաւորութեան:

Միջոցառումը իր աւարտին հասաւ օրուայ հանդիսավարին նշանակալից խօսքով, ուր ան վերահաստատեց “Rotary Club of Beirut Cedars”-ին կարգախօսը՝ Ծառայութիւնը անձնագոհութիւն է նշանաբանով:

Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ յատուկ հիւրասիրութիւն տրամադրուած վարժարանին կողմէ, որուն ընթացքին ստեղծուեցաւ երկխօսութեան յատուկ միջավայր նախաձեռնելու եւ ընդլայնելու ապագայ համագործակցութեան դաշտը, կազմելու եւ իրագործելու նորանոր ծրագիրներ:

“Rotary Club of Beirut Cedars” իր սրտաբոլս երախտագիտութիւնը կը յայտնէ բոլոր այն գործընկերներուն, նուիրատուներուն եւ մասնակիցներուն, որոնք իրենց ներդրումը ունեցած են սոյն նախագիծին յաջողութեան, որ դարձած է յոյսի փարոս. կայուն եւ լուսաւոր ապագայի խորհրդանիշ:

Յաւելեալ մանրամասնութիւններ ստանալու համար սոյն նախագիծի մասին, կարելի է այցելել հետեւեալ կայքէջը՝ <https://rcbeirutcedars.org/>



Ամփոփ տեղեկագիր Վահան Թէքէեան Միջն. Վարժարանի ծրագիրներուն եւ գործունէութիւններուն 2023-2024 ուսումնական տարուան

Ակադեմական Գործունէութիւններ:

Նկարագիրի Կրթութեան Ծրագիր

Օգնել Ուրիշին



Կարգապահութիւն



Խմբային Աշխատանք



Քաջութիւն





Գիտության Օր Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզէն Ներս:

24 Փետրուար 2024-ին, Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզի մեր փոքրիկ գիտնականները, հնարաւորութիւնը ունեցան վայելելու գիտության ընձեռած հրաշալիքները:





Ընտանի կենդանիներու օր Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզին մէջ:

Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզի աշակերտները մեծ ուրախութեամբ հիւրընկալեցին Միլու շունը եւ Տիտօ կրիան:





Բաց Դռներ Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզին ներս





Դասախօսություն Մաքրության և Սերտոդության Հմտություններու Մասին:

5 Մարտ 2024-ին, մեր վարժարանի Յակոբ Պարսամյան սրահին մէջ, Գարակէօզեան Հաստատութեան բուժաշխատող՝ Օրդ. Ռիթա Սվաճեան, սահիկներով, ներկայ ծնողներուն դասախօսեց առողջաբանութեան, մաքրութեան եւ սերտոդութեան հմտություններու մասին:



Առողջապահական Ընդհանուր Զննման Օր

14 Մարտ 2024-ին, Հաուլըրտ Գարակէօզեան Հաստատութեան Լիբրանանի դարմանատան անձնակազմէն խումբ մը բուժաշխատողներ, այցելեցին մեր վարժարանը եւ կատարեցին առողջապահական բուժզննումներ մեր աշակերտութեան եւ ուսուցչակազմին համար :







Դասախոսություն, ՄԱԿ-ի եւ, SDG-ներու մասին:

20 Մարտ 2024-ին, Վահան Թէքէեան Միջն. Վարժարան այցելեց Տիկ. Սոսի Շահինեան-Սաղըրեան: Ան աշակերտներուն ներկայացուց իր հեղինակած գիրքերէն երկուքը՝ Արամօն եւ Իր Երազը եւ, Երեք Քոյրերուն Նպատակները՝ բացատրելով, ՄԱԿ-ի եւ, SDG-ներու մասին:





Դասախօսություն Կիլիկիոյ Մասին:

Մեր վարժարանի 2023-2024 տարեշրջանը, Կիլիկիա Տարի հռչակման առիթով, Երկուշաբթի, 19 Փետրուար 2024-ին, Վահան Թեքեան Միջն. Վարժարան այցելեց Դոկտ. Ռաֆֆի Ճէրճեան:



Ցուցահանդես:



Կիլիկիոյ նուիրուած զարգացման մրցում:





Ծաղիկ դասարանը Հպարտ Քայլերով Կ'ուղղուի Դէպի Նախակրթարան

Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտեզի Ծաղիկ դասարանի փոքրիկները առիթը ունեցան բարձրանալու Նախակրթարանի Ա. դասարան, մօտէն տեսնելու եւ ծանօթանալու համար յաջորդ տարւոյան իրենց դպրոցական օրերը:





Մշակութային Տօներ:

Վարդանանց Տօն:


16 Փետրուար 2024-ին, մեր վարժարանի հանդիսասրահին մէջ, աշակերտական ոգեկոչմամբ յիշատակուեցաւ Վարդանանց հերոսամարտը՝ Աւարայրի ծակատամարտը: Օրուան պատգամախօսն էր՝ Արծն. Տէր Ղեւոնդ Զին. Լոշխաճեան:





Կիլիկիոյ Ձեռնարկ:

Կիլիկիոյ փառաւոր պատմութիւնն ու անցեալը վերապրելու համար, 19 Մարտ 2024-ին, վարժարանիս Յակոբ Պարսամեան սրահին մէջ տեղի ունեցաւ աշակերտական ձեռնարկ նուիրուած պատմական Կիլիկիոյ, ուր գործադրուեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր:




Կիլիկիոյ մասին Տեսաերիզ

Ապրիլ 2024-ին, Նախ. Զ.-էն Միջն. Գ. դասարաններու աշակերտները դիտեցին տեսաերիզ մը Կիլիկիոյ մասին:



Ապրիլ 24

Սէմ եւ Սիլվա Սիմոնեան մանկապարտեզի փոքրիկները ոգեկոչեցին Ապրիլ 24-ը:





Կրթական եւ Մշակութային Պտոյտներ:

Այցելութիւն՝ ԶԲԸՄ-ՅԵԸ, ԱՐԻՆ Պարախումբի Ներկայացման:

23 Փետրուար 2024-ին մեր վարժարանի աշակերտները (նախ. Ա.-էն Միջն. Գ.) ուղղուեցան Էմիլ Լահուտի անուան համագումարներու պալատ, ներկայ գտնուելու եւ հմայուելու ԶԲԸՄ-ՅԵԸ, ԱՐԻՆ պարախումբի նորագոյն, ՆԱՅԻՐԵԱՆ ԾԱՂԿՈՒՆՔ ելոյթով:



Աշակերտներու Տպաւորութիւնները:

Ուրբաթ 23 Փետրուար 2024-ին, ներկայ գտնուեցանք, Արին պարախումբի աշակերտական ելոյթին: Հաճոյքով դիտեցի խրոխտ տղոց, սիրուն պատանիներուն եւ նազանի աղջիկներուն սքանչելի պարերը: Առաւել, հիանալի տարազներ հագած էին բոլորը: Չմոռնամ ըսել, թէ ինձի համար մեծ ուրախութիւն էր նաեւ տեսնել դասընկերուիս՝ Սէրլին, որ այնքան գեղեցկօրէն կը պարէր բեմին վրայ:

Յովան Մարտիրոսեան
Նախ. Դ. դասարան

Ուրբաթ, 23 Փետրուար 2024-ին Վահան Թէքէեան վարժարանի աշակերտներով՝ առիթ եղաւ ներկայ գտնուելու Զ.Ե.Ը.-ի, Արին պարախումբի տարեկան ելոյթին: Հոյակապ ելոյթ մըն էր, որ դժուար է բացատրել քանի մը բառերով: Զմայլումով վայելեցինք անուշիկ տարազներով ծոխացած փունջ մը գեղեցիկ պարեր՝ հայկական, արաբական եւ եւրոպական, որոնք զանազան լուսախաղերով իւրայատուկ մթնոլորտ կը ստեղծէին:

Հրակ Քէօրիքեան
Նախ. 2. դասարան



Ուրբաթ, 23 Փետրուար 2024-ին, մեր վարժարանի աշակերտներով ներկայ գտնուեցաք Հ.Ե.Ը.-ի Արինե պարախումբի աշակերտական ելոյթին: Ինծի համար շատ հաճելի էր տեսնել Արինե պարախումբի հայ պարման-պարմանուհիները, որոնք միակամ ոգիով ու ջերմեռանդութեամբ կը պարէին բեմին վրայ: Անոնք իրենց վրայ կը կրէին գեղեցիկ տարազներ, որոնք բեմը կը զարդարէին ակնահաճ գոյներով ու ձեւերով, հարստացնելով հանդիսատեսին գեղարուեստական շունչն ու ոգին:

Պերժ Գոմպէճեան
Միջն. Բ. դասարան

Այցելութիւն՝ Պուրժ Համուտի Քաղաքապետարան:

29 Փետրուար 2024-ին, մեր վարժարանի Միջն. Ա. Բ. եւ Գ. դասարաններու աշակերտները այցելեցին Պուրժ Համուտի քաղաքապետարան





Աշակերտների Տպաւորութիւնները:

2 Փետրուար 2024-ին, միջնակարգ բաժնի աշակերտներով ու դաստիարակներով այցելեցինք Պուրճ Զամուտի քաղաքապետարան, ուր ջերմօրէն հիւրընկալուեցանք ածնակազմին կողմէ: Նոր փորձառութիւն մըն էր մեզի համար բացայայտել այդ վայրը եւ ծանօթանալ անոր աշխատածեփին: Այցելութեան ընթացքին հարցուցինք զանազան հարցումներ եւ ստացանք սպառիչ պատասխաններ: Մեր անկեղծ շնորհակալութիւնը կը յայտնենք բոլոր անձնակազմին իրենց սիրալիւր ընդունելութեան համար:

**Մէրի Ղազարեան
Միջն. Ա. Դասարան**

Մեր վարժարնին մէջ յաճախ կ'ունենանք դաստիարակչական այցելութիւններ: Անոնք մեր գիտելիքները եւ մտահորիզոնը կը զարգացնեն: 29 Փետրուար 2024-ին Միջնակարգ Ա. Բ. եւ Գ. դասարանի աշակերտներով այցելեցինք Պուրճ Զամուտի քաղաքապետարան, ուր հանդիպեցանք անոր անձնակազմին հետ եւ ծանօթացանք իրաքանչիւրի աշխատածեփին: Շնորհակալութիւն կը յայտնենք մեր վարժարանի տնօրէնութեան այս հիանալի հնարաւորութեան համար:

**Վանէսսա Ապու Նատէր
Միջն. Բ. Դասարան**

Այցելութիւն՝ Անթիլիասի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Մայրավանք Հայոց Ցեղասպանութեան Ոգեկոչում

22 Ապրիլ 2024-ին, Անթիլիասի Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ Մայրավանքի շրջափակին մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 109 ամեակի աշակերտական ոգեկոչում, որուն մաս կազմեցին նաեւ՝ Պէյրութի Վահան Թէքէեան վարժարանի Միջնակարգի աշակերտները:





Այցելություն՝ Պիքֆայա Դպրեվանք:

23 Ապրիլ 2024-ին, Նախ. Ա.-էն Միջն. Գ. դասարաններու աշակերտները մեր վարժարանի տնօրէնուհի՝ Տիկ. Սեւանա Սեմերձեան Տարագձեանի եւ իրենց դաստիարակներուն հետ ուղղուեցան Պիքֆայա դպրեվանք:



Աշակերտներու Տպաւորութիւնները:

Երեքշաբթի 23 Ապրիլ 2024-ին, այցելեցինք Պիքֆայա դպրեվանք: Հայոց Յեղասպանութեան յուշարձանին առջեւ մէկական ծաղիկ դրինք եւ ներկայացանք գեղարուեստական յայտագիրով մը: Ինծի համար ամէնէն տպաւորիչը այն էր, թէ դասընկերս՝ Ֆրէտին, որ նոր հայերէն սորված էր, երգեց, Ատանայի Ողբը: Մենք հայ կը մնանք, երբ կը սորվինք մեր լեզուն ու պատմութիւնը: Պիտի չյուսահատինք, միշտ ալ պիտի յիշենք ու պահանջենք մեր իրաւունքները:

**Յովան Մարտիրոսեան
Նախ. Դ.**

Երեքշաբթի 23 Ապրիլ 2024-ին մեկնեցանք Պիքֆայա, Հայոց Յեղասպանութեան յուշահամալիրի առջեւ ոգեկոչելու մեր պատմական հայրենիք մէջ տեղի ունեցած մեծ եղեռնի բիրատոր նահատակներու յիշատակը: Մենք՝ յարութիւն առած մեր ժողովուրդի սերունդներն ենք ու կը խօստանանք տէր կանգնիլ մեր աւանդին՝ որ կը հրամայէ մեզ չմոռնալ մեր պատմութիւնը:

**Լուի Առաքելեան
Նախ. 2. Դասարան**



Այցելություն՝ Կենդանաբանական Պարտեզ:

10 եւ 16 Մայիս 2024-ին, Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտեզի փոքրիկները ինչպէս նաեւ Նախ Ա , Բ եւ Գ դասարաններու աշակերտները հաճելի պտույտ մը ունեցան դէպի Կենդանաբանական պարտեզ:





Այցելություն՝ Համազգայինի, Քնար պարախումբի ելույթին:

17 Մայիս 2024-ին մեր վարժարանի Նախ. Զ-էն Միջն. Գ-դասարաններու աշակերտները ուղղուեցան Էմիլ Լահուտի անուան համագումարներու պալատ, ներկայ գտնուելու Համազգայինի, Քնար պարախումբի ելույթին:



Այցելություն՝ Նոր Սերունդ Մշակութային Միության, Արեգ պարախումբի ելույթին:

Ուրբաթ, 30 Մայիս 2024-ին մեր վարժարանի նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու աշակերտները ուղղուեցան Սըն Էլ Ֆիլի քաղաքապետարանի հանդիսասրահը, ներկայ գտնուելու Նոր Սերունդ Մշակութային Միության, Արեգ պարախումբի ելույթին:





Տարբեր Տոնակատարություններ:

Ուսուցչաց Տոն:

8 Մարտ 2024-ին, մեր վարժարանի Յակոբ Պարսամեան սրահին ներս տեղի ունեցավ ,Ուսուցչաց տոն-ի նշումը:

13 Մարտ 2024-ին, ուրախալի ու ջերմ մթնոլորտ կը տիրէր մեր վարժարանի ուսուցչարանին մէջ, ուր ՌԱԿ Շուշան-Վարդենի ակումբի վարչութեան անդամուհիները գլխաւորութեամբ ատենապետուհի՝ Տիկ. Անի Երկանեան Ղազէլեանի համեղ կարկանդակով պատուեցին մեր վարժարանի ժրաջան ուսուցչակազմը:





Գարնան Առաջին Օրը:

21 Մարտ 2024-ին ՍՀԸ եւ Սիլվա Սիմոնեան մանկապարտեզի փոքրիկները պատրաստեցին գունազարդ ձեռայիններ:



Մանուկներու Իրաւունքներու Օր:

21 Մարտ 2024-ին մեր վարժարանի աշակերտները տեղեկացան մանուկներու իրաւունքներու զանազան կէտերու մասին եւ իրենց զգացումները արտայայտեցին պատկերներով ու գրութիւններով:

Նոյն օրը, ԼՕԽ-ի վարչութիւնէն 2 անդամուհիներ այցելեցին մեր վարժարանը, որոնք նախ. Գ. եւ Դ. դասարանի աշակերտներուն բացատրեցին ՄԱԿ-ի կողմէ սահմանուած մանուկներու իրաւունքներու շարք մը կէտերու մասին, որմէ ետք կարճ տեսերիզ մը ցուցադրեցին: Աւարտին, աշակերտներուն բաժնուեցաւ թղթածրար:





Զատկուան Տօնակատարութիւն

22 Մարտ 2024-ին, Զատկուան տօնին առիթով մեծ տօնախմբութիւն էր մեր վարժարանին մէջ: Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք նախկին թէքէտանցի Աագեան քոյրերուն եւ իրենց մօր Ալիս Աագեանին, որոնք ամէն ջանք դնելով յաջողցուցին մեր վարժարանին Սրբ. Զատկուան տօնակատարութիւնը:







Վերջին Զանգ

3 Յունիս 2024-ին, մեր վարժարանի Յակոբ Պարսամյան սրահին ներս ձոխ յայտագիրով նշուեցաւ Միջն. Գ. դասարանի, Վերջին Զանգե-ը:



Մարզական Օր:

7 Յունիս 2024-ին, ունեցանք մեր տարեկան Մարզական Օրը՝ մեծ խանդավառութեամբ եւ բազմազան խաղերով լի:





Հիւրեր:

Սեւակ Արմենի Ղազարեանի Այցելութիւնը

Երեքշաբթի, 26 Մարտ 2024-ը ուրախութեան եւ հպարտութեան օր մըն էր Վահան Թէքէեան Միջն. Վարժարանին համար, որովհետեւ վարժարանս հիւրընկալեց Պարոյր Սեւակի թոռը՝ գրականագէտ Սեւակ Արմենի Ղազարեանը ու անոր ազնուափայլ կողակիցը, ինչպէս նաեւ վաստակաշատ բեմադրիչ եւ դերասան Դաիթ Յակոբեանը, Հիւրերուն կ'ընկերակցէր՝ Համազգայինի գրադարանի եւ Վահէ Սէթեան հրատարակչատան տնօրէն Տիար Յակոբ Հաւաթեանը:



Տէր եւ Տիկ Գառնիկ եւ Մանիա Գազէզեաններու Այցելութիւնը:





Տիկ. Այտա Մարգարեաի եւ Տիկ. Լիւսի Գալուստեանի Այցելութիւնը:



Rotarian Guests:





Մրցանքներ:

Կազմակերպութեամբ՝ Համազգայինի ,Թորոս Ռոսլինե կերպարունեստի դպրոցի, տեղի ունեցաւ միջ-դպրոցական գծագրութեան մրցանք: Ուրախութեամբ կը տեղեկացնենք, թէ մեր վարժարանի Նախ. Գ. դասարանէն՝ Ալիք Տարագճեան արժանացաւ 3-րդ մրցանակին, որուն գծագրութեան նիւթն էր ,Ընտանիքն:



Ուրախութեամբ կը տեղեկացնենք, թէ մեր վարժարանի փոքրիկ արուեստագէտներ՝ Նախ. Զ դասարանէն Յասմիկ Տէր Կարապետեան եւ Միշն. Գ. դասարանէն Սելենա Քէօսէեան մասնակցեցան ՖԱՊՐԻԱՆՕ գծագրական մրցանքին եւ արժանացան յատուկ վկայագիրներու:

Մեր Շուկան

14 Մայիս 2024-ին, Պէյրութի, Պուրճ Համուտի Քաղաքապետարանը ,Մասթըր Մոլեին մէջ կազմակերպեց , Մեր Շուկան 2 տօնավաճառը: Վահան Թէքէեան Միշն. Վարժարանէն Վանէսսա Ապու Նատէր ելոյթ ունեցաւ գեղեցիկ նազ պարով, որուն պարուսոյցն էր Օրդ. Փաթիլ Պալապանեան:



Աշխատաժողով

Մեր վարժարանի քարտուղարուհի՝ Տիկ. Նորա Մալաթեան, 2024 Ապրիլ 6-ին եւ 13-ին մասնակցեցաւ ,Ընկերային Լրատուական Ցանցերու եւ Ծրագիրներու Ցանցին»-ի աշխատաժողովին, որ կազմակերպուած էր Հայկազեան Համալսարանին կողմէ համագործակցաբար՝ Լիբանանի Հայոց Առաջնորդարանի Ընկերային Ցանձնախումբին, ղեկավարութեամբ Տիար Շանթ Ստեփանի:



Ջարդանաշխերու փորագրութեան աշխատանոց:

21 Մայիս 2024-ին, մեր վարժարանի Միջն. Բ եւ Գ. դասարանի աշակերտները հաճոյքով մասնակցեցան Հայկազեան Համալսարանի ուսանողական հարցերու գրասենեակի եւ Երեւանի Յովհաննէս Շարամբէեանի անուան ժողովրդական արուեստի թանգարանի գործակցութեամբ կազմակերպուած հայկական զարդանաշխերու փորագրութեան յատուկ աշխատանոցին:





Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզի Ամալերջի Հանդէս ու Վկայականաց Բաշխում:

Կիրակի 16 Յունիս 2024, առաւօտեան ժամը 11:00- ին, "Յակոբ Պարսամեան" սրահէն ներս տեղի ունեցաւ 2023-2024 տարեշրջանի Սէմ եւ Սիլվա Սիմոնեան Մանկապարտէզի ամալերջի հանդէսն ու վկայականաց բաշխումը:

Աշակերտները հանդէս եկան գեղարուեստական պատշաճ յայտագիրով մը, որմէ ետք ընթացք առաւ վկայականաց բաշխման արարողութիւնը:





Ամավերջի Հանդես ու Վկայականաց Բաշխում:

Շաբաթ 29 Յունիս 2024, երեկոյան ժամը 7:00- ին, "Յակոբ Պարսամեան" սրահին ներս տեղի ունեցաւ 2023-2024 տարեշրջանի ամավերջի հանդէսն ու վկայականաց բաշխումը:

Աշակերտները հանդէս եկան գեղարուեստական պատշաճ յայտագիրով մը, որմէ ետք ընթացք առաւ վկայականաց բաշխման արարողութիւնը:





Email: info@vahantekeyan.com
Website: www.vahantekeyan.com
Facebook: Vahan Tekeyan School in Lebanon
Instagram: [vahan.tekeyan](https://www.instagram.com/vahan.tekeyan)
Phone number: 01/260525 - 01/260574